Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20087

ՀԱՃԻ

ՀՈԳԵԲԵՐՁՈՒԹԵԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՎԻՃԱԿԻՆ

ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՑ

վասն 1883—84 ամ. տարի.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎԲԷԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1884

372
Հ-93

2012

Գրա-ն
С 5950
2002
372
Ն-93

ՀԱՇԻՒ

ՀՈԳԵԲԵՐԶՈՒԹԵԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ Վ. ԻՃԱՆԿԻՆ

ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՑ,

վասն 1883—84 թ—ան—ին. ամի.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎԲԷԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1884

50383-ա
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
36144-66

ՀԱՇԻՒ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ Վ. ԻՃԱԿԻՆ
ՀԱՅՈՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ,
վասն 1883–1884 ուսումն. տարի.

Նոր Նախիջևանի և Բեսսարաբիոյ Թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան պարտք են՝ ըստ 27 յօդ. Հանրական կանոնաց Կանոնադրութեան՝ ամի ամի ներկայացնել վեճակիս Սրբազան Առաջնորդին և Տրին Սրբազնութեան ձեռօքը նաև Վեհափառ Հայրապետի ազգիս Դպրանոցի, ըստ ամենայն մասանց կառավարութեան, տարեկան հաշիւը և՝ ապա՝ համաձայն ԻԸ պարբ". 17 յօդ". ի բոլոր ընծայել նոյն հաշիւը տպագրութեամբ յընդհանուր տեղեկութիւն։

Այս կանոնաց հետևելով Դպրանոցի Հոգաբարձութիւնը պարտականութիւն կը համարի հրատարակել ահա իւր 1883-1884 ուսումն. տարւոյն մէջ ունեցած դրծառնութեանցն ու Դպրանոցի ուսումնական

ընթացից և տնտեսական կառավարութեան տեղեկագիրն ու հաշիւը։

Հոդաբարձութիւնս 1883—1884 տարւոյ շրջանին մէջ ևս, իւրեան հլուհանդ ունենալով Դպրանոցի Պայծառհաստատ կանոնադրութիւնը, ըստ կարի աշխատեց նորանոր բարեկարգութիւններ մտցնել իւր կառավարութեան ներքոյ գտնուած ուսումնարանաց մէջ և ջանալ, որքան հնար էր, կատարելագործել այն վարժարանները հեղինակեալ, որպէս զի կարողանայ հասցնել իւրեանց յատուկ նպատակին և իրագործել իշխանութեանն ու վիճակիս հայ ժողովրդոց նոցանէ ունեցած յոյսերն ու պահանջները։

Դպրանոցի ուսումնական մասին և ներքին ընթացից վերայ տեղեկութիւն տալու համար, Հոդաբարձութիւնս ի դէպ կը համարի մէջ բերել այս տեղ Դպրանոցի մեծարու Տեսչի Հոդաբարձութեան մատուցած տեղեկագիրն, յորմէ ամենայն ոք կրնայ ծանօթալ վիճակիս Դպրանոցի ուղղութեանն ու ներքին կառավարութեանը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԵՍՉԻ

զընթացից Թեմական Դպրանոցի Նոր Նախիջևանի եւ Բեսարաբիոյ Վիճակին վասն 1883 — 1884 տարւոյն, տուեալ Հոդաբարձութեան Նարին։

Թեմական դպրանոցի 1883—1884 տարւոյն ընթացքը կնքելով, իբրև տեսուչ և մերձաւոր կառավարող դպրանոցի, ինձ համար քաղցր պարտականութիւն կհամարեմ, համաձայն 38 յօդ. կանոնադրութեան, ներկայացնել Մեծապատիւ Հոդաբարձութեան իմ տարեկան տեղեկագիրը և պարզել այն դրութիւնը, որի մէջ կը գտնուի Թեմական դպրանոցը, ցոյց տալ այն ուղղութեան կարևորութիւնը, որով նա այսօր կկառավարուի։

Թեմական դպրանոցը, ինչպէս մի միջնակարգ հոգևոր ուսումնարան, հաստատուած լինելով ծառայել այն թեմի օգտին, որի մէջ կգտնուի նա, կատարել նաև այն բոլոր ցանկութիւնները, որ կտածէր դէպի նա այդ թեմի հասարակութիւնը, պիտի ունենայ անշուշտ մի որոշ գոյն ուղղութիւն իւր նպատակին

հասնելու համար։ Մենք բոլորովին համոզուած լինելով, որ իւրաքանչիւր ուսումնարանի յառաջադիմութիւն կախում ունի իւր այդ ուղղութիւնէն և իւր ներքին բարեկարգութենէն, մեր բոլոր ճիգը թափեցինք տալ նորան այն ուղղութիւնը, որի հանգամանքները աւելորդ չենք համարիլ այժմուս իսկ պարզելու։ Այսերուս մէջ դեռ նոր կըհաստատուի մի հոգևոր դպրանոցի տիպար, տիպար, որ մենք կտեսնենք օտար հասարակութիւնների մէջ։ Հշմարիտ է, մենք ունինք դպրանոցներ համարեա բոլոր թեմերու մէջ, բայց շատ և շատ հանգամանքներ արգելք կլինին, որ այդ դպրանոցները հոգևոր միջնակարգ ուսումնարանի նոյնատեսակ ուղղութիւն ունենան և կառավարուին այդ տեսակ ուսումնարաններին յատուկ ծրագրով։ Ոմանք կկարծեն, որ մեր դպրանոցները պէտք է ունենան բէալական ուղղութիւն և ծրագիր, ոմանք կէս-բէալական և կէս-եկեղեցական, աւելի լաւ է ասել, ոչ այս և ոչ այն. մի խօսքով, նոցամէ իւրաքանչիւրը կկառավարուի նոյն իսկ ծրագրով, որին կհետեւէ նոցա վարչութիւնը առանց որ և իցէ ուշադրութիւն դարձնելու թէ ի՞նչ տեսակ

ուսումնարանների տիպարին կպատկանին այդ դպրանոցները, ի՞նչ նպատակների և մեր հասարակական ներկայ օր կարիքներին կոչուած են ծառայելու։ Այդ տեսակ դրութիւնէն կարող է առաջ գալ այն ցաւալի հանգամանքը, որ մեր դպրանոցներէն աւարտած աշակերտը առաջին նուազ կ'մոլորուի և չի իմանալ՝ ինչի՞ է պատրաստուած, ի՞նչ ճանապարհով պէտք է գնայ նա, որ կարողանայ արդարացնել հասարակութեան յոյսերը, որը մեծ ակնկալիք ունի նորանէ ծախսելով նորա վերայ մի բաւականին գումար, որ կարողանայ վերջապէս ապահովացնել իւր գրութիւնը նիւթականապէս և բարոյապէս։ Այստեղ բնական կերպով յառաջ կուգայ մի խընդիր թէ, յայտնի բան է, մեր ուսումնարանները, իբրև հոգևոր հաստատութիւններ, պիտի ընծայեն հասարակութեան այնպիսի կրթուած երիտասարդներ, որոնք կարողանային ստանձնել հոգևոր կոչումը, դառնալ լուսաւորութեան միջնորդ տգէտ ամբոխին, հասկացնել, պարզել ժողովրդին Աստուծոյ խօսքը Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեամբ, ունենալ կարողութիւն մաքառելու մեր եկեղեցւոյ թշնամիներու դէմ

նոյն իսկ նոցա զէնքով, և պաշտպանելու իւրեանց հօտը բողոքական եղբայրների և յիսուսական աբեղաների ճիրաններէն, որոնց թակարդների մէջ յաճախակի կընկնի նա։ Ասոքա, իբրև միջնորդ լուսաւորութեան, պիտի օժտուած լինին այն տեղեկութիւններով, որով կարողանան ցոյց տալ ամբոխին նորա ջարն ու բարին, խորհրդատու լինին նորան բոլոր հանգամանքներու մէջ։ Իսկ եթէ նոքա չ՚ընդունեցին հոգևոր կոչումն, նոցա առաջ բաց է մի ուրիշ ընդարձակ ասպարէզ գործունէութեան, որով ոչնչով պակաս կարող են արդարացնել ժողովրդի յոյսերը։ Ասոքա պէտք է լինեն լաւ ուսուցիչներ, — որոնց թիւը շատ պակաս է մեր մէջ — որոնց ձեռքին պէտք է գտնուի ամբողջապէս մեր ուսումնարանական գործը և ընդհանրապէս Հայի կրթութիւնը։ Իսկ եթէ ոչ այս և ոչ այն ցանկացան լինել նոքա, պէտք է ուսումնարանէն այնքան տեղեկութիւն ստանան, այնքան գիտութեան պաշար հանեն, որ կարողանան մտնել ուղղակի կեանքի մէջ կամ տէրութենական բարձր ուսումնարաններ իւրեանց նպատակին հասնելու։ Ահա այս նպատակներին պէտք է ծառայեն հայ դպրոցները, մեր հասարակութեան այս կարիքներին պէտք է բաւականութիւն տան նոքա։ Դ՚շմարիտ է, բարդ են և ընդարձակ այդ նպատակները, բայց միևնոյն ժամանակ անխուսափելի։

Այս այսպէս լինելով, այժմ եթէ մենք համեմատելու լինենք այս ծրագիրը, գոնեա մօտաւորապէս, մեր մի քանի դպրոցների ծրագիրների հետ, ահագին անդունդ կըգտնենք նոցա մէջ։ Մի քիչ սորանէ սովորելով, մի քիչ նորանէ հարևանցի փոխ առնելով, ինչպէս որ կանեն այդ դպրոցները, յայտնի բան է, ոչ մի արդասիքի ևս չեն հասնիր։ Մի քանի պատմութիւն հին կտակարանէն, Աւետարանը առանց որ և իցէ պարզաբանութեան, մի փոքր Հայոց եկեղեցւոյ պատմութենէն, առանց որ և իցէ հասկացողութիւն ունենալու ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան վերայ, առանց եկեղեցւոյ հարց գրուածներին տեղեկանալու, առանց եկեղեցիների բաժանուելու պատճառն իմանալու, հայ թարգմանութիւնները բնագրի հետ համեմատելու, — և ահա պատրաստ է այդ դպրոցներէն աւարտած քահա-

նայացուն։ Կէս ուղիղ, կէս սխալ կարդալ-գրել սովորելով, անգիտակցաբար մի քանի գրաբառ ոճեր անգիր անելով, թէ՛ նոր գրականական և թէ՛ հին կլասիքական լեզուների հոգուն անծանօթ, առանց որ և իցէ համեմատական լեզուի ուսումնասիրութեան. մի կտոր պատմութիւն առանց պատճառաբանութեան և համեմատութեան ընդհանուր պատմութեան հետ, մի կտոր հայ աշխարհագրութիւն Ինճիճեանէն մնացած, — և ահա՛ պատրաստ է այդ դպրոցներէն աւարտած մանկավարժը։ Այլ ի՞նչ ասել նոցա մասին, որոնք կը ցանկանային տէրութենական բարձրագոյն ուսումնարանները մտնել։ Խաւարար ծանօթութիւն չունենալով տէրութենական լեզուին, ամենևին չիմանալով կլասիքական հին լեզուները, քանի քանի դժուարութիւնների պէտք է հանդիպէր նա, որ կը ցանկանար արքունի բարձրագոյն ուսումնարանի շէմքը կոխելու։ Ահա այս և այսպիսի շատ մտածմունքներէ և հանդամանքներէ դրդուած, մենք տուել ենք դպրանոցին այն ուղղութիւնը, որով նա այժմ կընթանայ աջողակութեամբ։ Ա՛շմարիտ կը լինէր, եթէ ասէինք, որ այդ ուղղութիւնը չենք տուել

մենք, այլ միայն տուածը և եղածը լրացրել և իրագործել ենք։ ,,Սեմինարիա,, ասուած ուսումնարանները ունին մի գոյն, մի տիպար, որ հէնց իւրեանց մէջ կամփոփեն այդ ուղղութիւնը. առանց դորան նոքա պիտի դադարեն հոգևոր սեմինարիա կոչուելէն։ Տէրութիւնը, հաստատելով սեմինարիաներ, տուել է նոցա մի տեսակ հոգևոր կլասիքական ուղղութիւն, նա ստեղծել է մի հոգևոր ուսումնարանի տիպար, որի մէջ կլասիքականութիւնը մեծ դեր խաղալով, գիտակցական կանէ այն եկեղեցական առարկաների ուսումնասիրութիւնը, որոնք կաւանդուեն այդ ուսումնարաններու մէջ, կպարզէ նոցա և հասկանալի կանէ աշակերտների համար։ Ահա այդ հոգևոր — կլասիքական ուղղութիւնն է, որ, տէրութենական Խարձրագոյն կանոնադրութեամբ հաստատուած, տուած է և մեր ուսումնարանին, որ և մենք կաշխատենք իրագործել։ Այդ ուղղութեան օգտակարութիւնը ակնյայտ է թէ՛ աշակերտների զարգացման համար և թէ՛ եկեղեցական առարկաները դիւրութեամբ և հասկանալի կերպով իւրացնելու համար։ Ունենք հէնց Հայոց լեզուն։ Մեր հին կլասիքական լե-

զուն, ժամանակակից գրականական լեզու լինելով հին յունարէնին և լատիներէնին, զարգացել է համարեա նոցա ազդեցութեան ներքոյ, նա մանաւանդ յունարէնի։ Այս կլասիքական գրականութեան հայրերը, իւրեանց ուսումը ստանալով հին Յունաց ուսումնական կենտրոններու մէջ աշխատել են — և հէնց այսոց լեզուի բնաւորութիւնն ևս այսպէս է պահանջել — յարմարեցնել և ենթարկել հայ քերականութիւնը այն կանոններին, որոնց կհետևեն լատիներէնը և յունարէնը։ Այս այսպէս լինելով մեր լեզուի շատ ոճեր և կանոններ մեզ լաւ հասկանալի կլինեն միայն, երբ մենք կանցնենք նոցա՝ համեմատաբար հին լեզուներին։ Ուստանց զորան շատ բան մնալու էր մեզ անծանօթ ու մութ միանգամայն։ Այս ասելով մենք չենք կամենալ պնդել, որ հայերէնը չէ կարելի իմանալ առանց հին լեզուների, ոչ, այլ միայն այն, որ այդ լեզուները շատ կօգնեն մեզ ու կըհեշտացնեն մայրենի լեզուն գիտակցաբար ուսումնասիրելու։ Այլևս չենք ասիլ այն օգտի մասին, որ կլասիքական լեզուների ուսումնասիրութիւնը կուտայ մեր ազգային պատմութեան. յայտնի է, որ մեր

պատմութեան աղբիւրներու շատերը գրուած են այդ լեզուներով։ Այդ լեզուների օգտակարութիւնը առաւել ևս ակներև կերևի եկեղեցական առարկաները ուսումնասիրելու ժամանակ։ Որի՞ն յայտնի չէ, որ Սուրբ գրքերի ընտիր մեկնութիւնները միայն յունաց լեզուով են գրուած, որի՞ն յայտնի չէ, որ սուրբ Հարց գրուածները, որոնց շատերի թարգմանութիւնը մենք մինչև անգամ չունինք, մենք, միայն յունաց լեզուն իմանալով, կարող ենք ուսումնասիրել։ Մի խօսքով, մի փոքր աստուածաբանական գիտութիւն ձեռք բերելու համար, անհրաժեշտ է հին լեզուների ուսումնասիրութիւնը։ Այդ լեզուների օգտակարութիւնը եկեղեցական առարկաների վերաբերութեամբ ընդունուած է բոլոր լուսաւոր երկրների հոգևոր ուսումնարաններու և աստուածաբանական բաժիններու մէջ, այդ ընդունուած է և մեզ մօտ, ու մեր հոգևոր ուսումնարաններին նախագաղափար, ուստ հոգևոր ուսումնարաններու մէջ։

Ընդունելով կլասիքական գաղափարը, մենք աշխատել ենք չափաւորել ամենայն տեսակ հին լեզուների դասերի թիւը և յար-

մարեցնել մայրենի լեզուի դասաւանդութեան եղանակին, միշտ առաւելութիւն տալով մայրենի լեզուին ու նոցա համարելով երկրորդական և իբրև օժանդակ առարկայ։ Մենք կարևոր ենք համարել մոցնել դասաւանդելի առարկաների մէջ և արդի գրականական լեզուն, տեղական բարբառի համեմատութեամբ, յորմէ մինչև մեր օրերը բոլորովին զուրկ է եղել դպրանոցը։ Աշակերտին միայն այն ժամանակ բոլորովին հասկանալի կլինի մեռած գրաբառի կանոնները և ձևերը, երբ նոքա կմեկնուին կենդանի լեզուի ձևերով և համեմատութեամբ։ Եւ վերջապէս, այժմուայ հայ մտքի աշխատանքի արդասիքը և գրականութիւնը, բոլորը այդ նոր գրականական լեզուով գրուելով, մեծ թերութիւն կըլինէր դպրանոցի համար, եթէ աշակերտները չընտելանային կենդանի լեզուի կանոններին։ Այդ արդէն ընդունուած է, ինչպէս մի անհերքելի ճշմարտութիւն, և մեր բոլոր ուսումնարաններու մէջ նորան տուած է իւր արժանաւոր տեղը։

Դպրանոցի տեսչութիւնը զգալով ընտիր ձեռնարկների կարևորութիւնը ուսման գործի մէջ, նոցա ընտրութիւնը իւր առանձին ու-

շադրութեան առարկայ շինեց և աշխատեց տալ աշակերտների ձեռքը միայն այն ձեռնարկները, որ բազմակողմանի քննութեան ենթարկուած էին մեր պարբերական թերթերու մէջ, իսկ այն առարկաներէն որոնց համար ձեռնարկներ չկան կամ եղածները վատ են, մանկավարժական ժողովը լաւ համարեց թողնել ուսուցչին պարզ և հակիրճ լեզուով կօնսպեկտ կազմել կամ դասախօսութիւնը համառօտ գրել և աշակերտներին բաժանել։ Այս մանաւանդ մեծ ուշադրութիւն է դարձրած դասաւանդութեան եղանակներու վերայ. վճռուած է, միայն արդի մանկավարժական ընտիր եղանակները գործ դնել, յայտնի բան է, յարմարեցնելով նոցա թէ՛ տեղի, թէ՛ աշակերտների զարգացման և թէ՛ ուսումնարանի հանգամանքներին։ Ընդունելով ընթերցանութիւնը օգտաւէտ գրքերի, իբրև մի կարող զէնք աշակերտների զարգացման նպաստող գործի մէջ, վարչութիւնս աշխատել է, կազմել մի աշակերտական մատենադարան, որի հիմքը արդէն դրուած է ուսուցիչներէն ժողովուած գումարով, և դորանով գնած գրքերը հերթով կըբաժանուին

աշակերտներին, որոնցմէն յետոյ կարգացածի մասին հաշիւ կը պահանջուի։

Բայց որովհետև մտաւոր կրթութիւնը միայն այն ժամանակ կունենայ իւր կատարելութիւնը, երբ նա միացած և ձեռք ձեռքի տուած կը թանայ բարոյական կրթութեան հետ, դպրանոցի վարչութիւնը կաշխատէ, մտաւոր կրթութեան հետ տալ նոցա և բարոյական։ Ուսուցչաց խորհրդի անդամների վերայ պարտականութիւն է դրած խստիւ նայել աշակերտների բարոյականութեան վերայ, հսկել նոցա մաքրութեան, վայելուչ խօսակցութեան և առհասարակ նոցա վարեցողութեան վերայ, խստիւ պահել ուսումնարանի ներքին բարեկարգութիւնը, որովհետև յայտնի է, որ բարոյական և մտաւոր կրթութիւնը այն ժամանակ միայն կհասնեն իւրեանց նպատակին, երբ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին բարեկարգութիւնը լաւ դրութեան մէջ կլինի։ Այս կարևոր նպատակին հասնելու համար, տուած է իրաւունք դասարանների դաստիարակներուն մտնել իւրեանց աշակերտների տները՝ վերահասու լինելու թէ նոցա բացակայութեան, թէ պարապմունքի և թէ առհասարակ, նոցա բարոյականութեան

վերայ։ Դպրանոցի վարչութիւնը այդ դէպքի մէջ կհետևէ այն ամենէն ընդունուած գաղափարին, որ միայն բարոյական տեսակէտէն առողջ անհատները կարող են ընդունակ լինել սեպհականացնելու իւրեանց և վայելելու կրթութեան սուրբ և օգտակար պտուղները։

Այս մեր բոլոր յիշածը իրագործելու համար, այս ուսումնարանական տարուայ ընթացքի մէջ ունեցած մանկավարժական ժողովներում բոլոր վերոյիշեալ կէտերը մանրազնին քննութեան առարկայ դառնալով, առաջարկուած են եղել և իրագործելու միջոցներ, որոնք բոլորը ապա գործ դրուած են և ունեցել են յաջող հետևանք։ Մանկավարժական ժողովը սահմանել է կանոնագրութիւն դաստիարակների համար և գրանով որոշել է նոցա յարաբերութիւնը դէպի նոցա խնամքին յանձնուած սանները։

Մանկավարժական ժողովը իւր երկարացիգ նստերու մէջ ուշադրութիւն է դարձրել իւրաքանչիւր աշակերտի առանձնայատկութիւններու վերայ, ի նկատի է առել նոցա զարգացման, յառաջադիմութեան պայմանները. մի խօսքով, աշխատել է ուսում-

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUA-Арм ССР
Ц. Ամ. Մ. Մաշտոցի անվ.
36144-66

նասիրել բոլոր այն հանգամանքները, որոնց մէջ կանցնի աշակերտի կեանքը։ Այս հաստատել է նոր կարգի ցուցակներ իւրաքանչիւր քառորդի համար և, բոլոր ուսումնարանական տարին բաժանելով չորս քառորդի, որոշել է արձանագրել նոցա մէջ իւրաքանչիւր աշակերտի քառորդական թուանշանը, հաւասարապէս նշանակութիւն տալով յառաջադիմութեան նշանների հետ և վարքի ու ուշադրութեան թուանշաններին։ Մանկավարժական ժողովը կարգադրել է բաժանել աշակերտներին յիշատակարաններ, որոնց մէջ դաստիարակները, արտագրելով թէ՛ շաբաթական և թէ քառորդական թուանշանները, կուտան միջոց ծնողներին ի մօտոյ ծանօթանալ իւրեանց որդւոյ յառաջադիմութեան արդասիքներուն։ Մանկավարժական ժողովը որոշել է, հեռացնել դպրանոցէն այն աշակերտներին, որոնք իւրեանց անուղղայ վարքով վատ օրինակ են եղել ուրիշներին, կամ թէ իւրեանց անընդունակութեամբ միայն տեղ են բռնել դասարաններու մէջ և այդպիսով փակել են ուսումնարանի դուռը և ընդունակների համար։ Մանկավարժական ժողովը վճռել է քննու-

թիւնները խստիւ կատարել և առաջարկել է մի նոր, արդարացի և իւր նպատակին հասնող ձև, որ ընդունուած է և Կայսերական ուսումնարաններու մէջ. վճռել է. ըերանացի քննութիւնների հետ և գրաւոր քննութիւններ անել։ Յայտնի է, որ աշակերտի գիտութիւնը կատարելապէս կերևայ միայն նորա գրաւոր աշխատութիւնների մէջ. նա որոշել է, որ քննութեան ենթարկուին միայն նոքա, որոնք թէ՛ իւրեանց քառորդական թուանշաններով, թէ իւրեանց զարգացմամբ յոյս կուտան հետևեալ վերին դասարանը փոխադրուելու։ Թէպէտ այսպիսով փոխադրուողների թիւը փոքր տոկոս է կազմել ընդհանուր թուի հետ համեմատելով, բայց և այնպէս լաւ է համարել ունենալ ընտիր և սակաւաթիւ աշակերտներ, քան շատ և վատ. — չպէտք է նայել քանակութեան, այլ յատկութեան վերայ։ Այս միջոցներով դպրանոցական վարչութիւնը հասել է այն հետևանքին, որ կիսոստանայ դպրանոցին լաւ ապագայ։ Դասարանները այժմ կազմուած են միահասակ և միատեսակ զարգացման տէր և յայտնի քանակութիւն գիտութեան պաշար ունեցող աշակերտներէ, որ և շատ կը-

նպաստէ, ուսման կանոնաւոր ընթացքին։ Մանկավարժական խորհրդոց վերևն յիշուած կարգադրութիւնները իւրեան ժամանակին յայտնուած են Հոգաբարձական խորհրդարանին և իւր հաւանութիւնն ու հաստատութիւնը ստանալով գործադրուած են անթերի. ուստի և ներկայումս մեր դպրանոցի ներքին և արտաքին բարեկարգութիւնը հասել է այն դրութեան, որ վայել է իւրաքանչիւր բարեկարգ ուսումնարանի։ Այդ երևոյթը չէ կարող չնկատել մէկը, եթէ միայն նա թէ՛ ուսումնարանի մէջ և թէ՛ նորանէ դուրս հետաքրքրուել է ուշադրութիւն դարձնել աշակերտի վերայ։ Աշակերտների բացակայութեան խնդիրը, որ դպրանոցի ցաւերէն մէկն է եղել միշտ, համարեա թէ վերացած է մէջտեղէն։ Եւ եթէ կըպատահեն բացակայութեան դէպքեր, առանց դորան ոչ մի ուսումնարան չէ կարող լինել, կլինեն նոքա միայն յարգելի պատճառներով, որոնց վերահասու լինելով կըհաւաստիանայ Տեսչութիւնը ծնողների նամակներով և բժշկական վկայականներով։ Իսկ ինչ որ կըվերաբերի ուսումնական մասին ընդհանրապէս և աշակերտների յառաջադիմութեան մասին մասնաւորապէս, այդ կարող է կշռել իւրաքանչիւր հասկացող և բարեխիղճ անհատ, որ բարեացակամն է ուսումնարանիս։ Եւ վերջապէս այդ կերևայ և անկից, որ այս կարճ միջոցի մէջ եղել են օրինակներ, որ դպրանոցի մի դասարանէն դուրս գալով, մտել են տէրութենական ուսումնարանի համապատասխան դասարանը, և որ գլխաւորն է, այդ ուսումնարանի մէջ իւրեանց ուսման ընթացքի մէջ վատ աշակերտների շարքին չեն. իրականութիւնը պարզ է և բոլորին յայտնի, անունները տալ աւելորդ է։

Ըստ կարի ցոյց տալով մեր դպրանոցի անցեալ տարուայ ընթացքին մէջ ունեցած գործունէութեան եղանակը, ընդունած ուղղութիւնը և այդ ուղղութեան իրագործելէն ստացուած արդիւնքը, պարտականութիւն կըհամարեմ ինձ վկայել, թէ գործի աջողութեան ըստ ամենայնի նպաստել են մանկավարժական ժողովների թափած ջանքը և մեծարգոյ Հոգաբարձուաց առ նա ցուցած հաւատարմութիւնն ու ձեռնտուութիւնը. իսկ ստացած արդիւնքից եզրակացութիւն անել ընդհանուր գործի և վարչութեան գործունէութեան վերայ կթողում հասարակու-

թեան։ Բայց և այնպէս աւելորդ չեմ տեսնել յայտնել, որ գործը դեռ նոր է և պէտք է զգուշութեամբ վարուել նորա հետ. նա կնմանի մի գեղեցիկ ծառի տունկի, որ թէպէտ գործին հմուտ մարդու ձեռքով տնկուած է, և նորան շրջապատող բոլոր պայմաններն ևս կը-յաջողեն նորա աճելուն, բայց, եթէ նորա վերայ չնայեն, նորան ժամանակին ջուր չտան, կատաղի հողմէն և ձմեռուայ դառնաշունչ եղանակէն չպաշտպանեն, կընկնի ու կչորանայ խսպառ։ Թող պաշտպանուի, պատուաստան տրուի նորան, և նա կաճի և բողբոջներ կարձակի, խոր արմատներ թողնելով։ Թող փչէ այն ժամանակ կատաղի քամին, թող փոթորիկ բարձրանայ. նա անշարժ կմնայ անշուշտ։

Պարտականութիւնը, քաջ տեղեակ լինելով որ ուսումնական գործի աջողութիւնը կախում ունի գլխաւորապէս գործին հմուտ և բանիբուն դաստիարակներէն և ուսուցիչներէն, տարուոյն սկիզբն իմ առաջարկութեամբ հին ուսուցիչներին մի քանիսին անհամապատասխան համարելով խուրեանց պաշտօններին, արձակեց և նոցա տեղ հրաւիրեց արժանաւորներին։ Տարուայ ընթացքում ուսուցիչքն էին.

ՑՈՒՑԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԱՒԱՆԴԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ։

Գ. Գալուստ Կարապետեան Զարիխեան, ուսուցիչ լատին ու յոյն լեզուաց, (որ եւ Տեսուչ)։

Բարեկրօն Տէր-Խաչատուր Ուսդ. քահանայ Զարիֆեան, կրօնուսոյց (դասարանաց)։

Բարեկրօն Տէր-Մարտիրոս քահանայ Գանձապետեան, կրօնուսոյց (նախակրթարանաց) եւ ուսուցիչ գեղագրութեան (I հին. եւ զգթ. դաս.)։

Գ. Գէորգ Խաչատրեան, ուսուցիչ Հայոց դրաբառ լեզուի։

Գ. Երուանդ Շահ-ազիզ, ուսուցիչ Հայոց պատմութեան, աշխարհագրութեան եւ Հայոց աշխարհաբառ լեզուի (բարձր հին. նախակրթ.)։

Գ. Վահան Քիրլեան, ուսուցիչ լատին լեզուի (I զգնթ. դասար.) Հայոց լեզուի (բարձր զգնթ. նախակ.) եւ թուաբանութեան (բարձր նախակրթարաններում) որ եւ էր տուտոր։

Գ. Գրիգոր Գէօլվէթեան, ուսուցիչ ռուսաց լեզուի (բարձր նախակրթարաններում) որ եւ էր վերակացու։

Գ. Խաչատուր Ռոմանոսեան, ուսուցիչ Հայոց եւ Ռուսաց լեզուների եւ թուաբանութեան (ստորին նախակրթ. երկու բաժիններում) որ եւ էր մատենադարանապետ։

Դպիր Մարգար Տէր-Սարգսեան, ուսուցիչ երգեցողութեան եւ ձայնագրութեան։

Николай Васильевичъ Батицкій, ուսուցիչ ռուսաց լեզու (II եւ III դասար.) եւ ընդհանուր պատմութեան (III դասար.)։

Николай Николаевичъ Прасоловъ, *ուսուցիչ թուաբանութեան (դասարաններում) որ եւ էր տուտոր։*

Михаилъ Кузьмичъ Чередѣевъ, *ուսուցիչ ռուսաց լեզուի (I հին. եւ զդնթ. դասար.)։*

Юрій Андреевичъ Миклашевичъ, *ուսուցիչ դաղղիացւոց լեզուի (II եւ III դասար.)։*

Иванъ Андреевичъ Бахмутскій, *ուսուցիչ գծագրութեան եւ նկարչութեան։*

Գալով նոցա պարապմանց, քաղցր պարտականութիւն կհամարեմ վկայել, որ ամենքը կատարել են իւրեանց գործը ամենաբարեխիղճ կերպով։ Եթէ պատահել են բացակայութիւնք դասերէն, դոքա միշտ ունեցել են արդարացի պատճառներ. ոմանց դասերի ճիշդ յաճախելուն արգելք է եղել ծանր հիւանդութիւնը, ոմանց՝ ընտանեկան և ուրիշ հանգամանքները. պ. Գ. Խաչատրեան բացակայել է 14 օր (52 դաս.) ծանր հիւանդութեան պատճառաւ։ Հայր Օ. արիֆեանը բացակայել է 14 օր (52 դ.) զանազան պաշտօնական պատճառներով։ Հայր Գանձապետեան բացակայել է 11 օր (18 դ.), պ. Խ. Ռոմանոսեան բացակայել է 12 օր (38 դ.) պ. Գէօլլվեթեան — 3 օր (9 դ.) դպ. Մ. Տէր-Սարգսեան — 7 օր (19 դաս.), պ. Բատիցկի — 3 օր (6 դ.), պ. Ղերեգեեվ,

— 7 օր (14 դ.) պ. Մեկլաշեվիչ — 1 օր (2 դաս.), պ. Բախմուտսկի — 5 օր (6 դաս.), Տեսուչը, Պպ. Հ. ահ-ազիզ, Գիրլեան և Պրասօլով երբէք չեն բացակայել և ազատ միջոցներին պարապել են բացակայող ուսուցիչների տեղ։

Գալով աշակերտների պարապմանց, պէտք է խոստովանեմ, որ սկզբում դժուար էր մեզ պահանջել աշակերտներէն այն գիտութիւնը որ սահմանուած էր մեր ծրագրում, ուստի աշակերտների գործը թեթեւացնելու համար, կարեւոր համարեցի նոցա պարապմանց վերայ աւելացնել կրկնողական դասեր, որոնք կղեկավարուէին տուտորներէն. այս վերջիններիս պարտականութիւնն էր մեկնել և պարզել աշակերտներուն այն, ինչ որ նոցա համար անհասկանալի էր։ Այս կերպով դրուած գործը շուտով բարեյաջող արդիւնքների հասաւ. եթէ ոչ ամենքը, գոնէ, մեծամասնութիւնը աշակերտներու այժմ այնքան պատրաստուած են, որ ինքնուրոյն աշխատանքով կարող են պատրաստել դասերը։

Այս ցուցակէն կերեւի, որ III դասարանէն փոխադրուածների թիւը համեմատութեամբ քննութեան թոյլատրուած աշակերտաց թուի հետ, կըկազմէ 100%, իսկ ընդհանուրի հետ համեմատութեամբ կկազմէ 70%։ II դասարանէն փոխադրուած աշակերտաց թիւը կըկազմէ՝ թոյլատրուածների համեմատութեամբ 66,66%, ընդհանուրի վերաբերմամբ — 35,29%։ I հիմն. դասարանէն փոխադրուածների թիւը կըկազմէ 90% եւ 37,50%։ I զդնթ. դաս. փոխադրուածների թիւը — 88,88% եւ 29,63%։ Բարձր հիմնական նախակր. փոխադրուածների թիւը կըկազմէ 92,30% եւ 31,57%։ Բարձր զուգընթ. նախակրթ. փոխադրուածների թիւը կըկազմէ 78,57% եւ 31,42%։ Ստորին նախակրթարանի Բ. բաժնէն փոխադրուածները կըկազմեն 85% եւ 56,66%։ Նոյն նախակրթարանի Ա. բաժնէն փոխադրուածները — 100% եւ 54,54%։

ՅՈՒՑԱԿ

Թուոյ աշակերտաց Փերեմեան Դպրանոցի՝ ըստ դասարանաց՝ յընթացս 1883—84 ուսումն. տարւոյ։

ԴՊՍԱՐԱՆՔ.	Տարւոյն ընթացքի մէջ.	Ադամակերաց տարւոյն մէջ. Ըստ կամաց.	Ադամակերաց տարւոյն մէջ. Ըստ որոշման վարչութ.	Տարւոյն վերջը.	Ադամակերաց տարւոյն վերջը. Ըստ կամաց.	Ադամակերաց տարւոյն վերջը. Ըստ որոշման վարչութ.	Փոխադրեալաց.	Մնացեալաց.	Թոշակաւորաց.	Զրեավարժից.
III	11	1	—	10	2	—	7	1	8	3
II	20	3	—	17	5	1	6	5	15	5
I հիմն. . . .	24	—	—	24	5	1	9	9	19	5
I զուգ. . . .	29	1	1	27	5	1	8	13	26	3
Բարձր նախ. հիմն.	40	1	1	38	—	7	12	19	29	11
,, ,, զուգ. .	37	—	2	35	2	1	11	21	28	9
Ստ. նախ. Բ. բաժ.	30	—	—	30	3	1	17	9	21	9
,, ,, Ա. բաժ.	25	1	2	22	1	—	12	9	12	13
Գումար.	216	7	6	203	18	12	82	86	158	58

ՀԱՄԱՌՕՏ ՑԵՂԵԿԱԳԻՐ

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(1883—84 ուսումն. տարում)։

Ս. Հռիփսիմեան օրիորդական ծխական դպրոցը այս 1883—84 ուսումնարանական տարուայ ընթացքի մէջ ունեցել է երկու պատրաստական և առաջին դասարան։ Աշակերտուհիների ընդհանուր թիւը եղել է 123, որոնցմէն ստորին պատրաստականի մէջ — 48, բարձրի մէջ — 48, և առաջին դասարանի մէջ — 27։ Առաջին դասարանի քննութեան թոյլատրուած 11 աշակերտուհիներէն փոխադրուել են երկրորդ դասարան 9։ Բարձր պատրաստականի քննութեան թոյլատրուած 24 աշակերտուհիներէն փոխադրուել են առաջին դասարան 21։ Ստորին պատրաստականի քննութեան թոյլատրուած 28 աշակերտուհիները ամենքը ևս փոխադրուել են բարձր պատրաստական։

Գալով միւս երկու ծխական դպրոցներին, մենք ցաւելով պէտք է ասենք, որ նոքա նախանձելի դրութեան մէջ չեն, հնայելով մեր բոլոր ջանքերին տալ նոցա այն դրութիւնը, որ վայել է իւրաքանչիւր փոքր ի շատէ բարեկարգ ծխական տարրական ուսումնարանի։ Ձկարողանալով այդ դպրոցների նիւթական միջոցները բարելաւել, թէև մենք մեր ձեռքէն եկածը բոլորը արինք, մեր ուշադրութիւնը գլխաւորապէս դարձրել ենք ուսումնական մասը բարւոքելու, թէպէտև մէկը միւսի հետ այնպէս կապուած է, որ նոցա բաժանել միմեանցէ չէ կարելի։ Մենք այդ դպրոցների կեանքը ուսումնասիրելու, նոցա կեանքի պայմանները իմանալու և նոցա ցաւերին դարման տանելու համար, դպրանոցի ուսուցիչներէն երկուսին նշանակեցինք, որպէս զի փերահսաու լինեն նոքա քննութիւններին և իւրեանց տեսածի և լսածի մասին մանրամասն հաշիւ տալով, խորհրդակցեն մեզ հետ առաջադիմութեան տրգիռքների առաջը առնելու, պակասը և թերին լրացնելու։ Մ-

բողջ մի շաբաթ տևեցին երկու դպրոցների քննութիւնները, որոնց կամանակցէին վերոյիշեալ ուսուցիչները խրատանչիւր օր 10 ժամից մինչև 3։ Երեկոյեան, երբ որ արդիւնքը յայտնուեցաւ, մենք խորհուրդ կազմեցինք այդ ծիսական դպրոցների ուսուցիչներէն և դպրանոցի վերոյիշեալ երկու ուսուցիչներէն խորհրդակցելու և քննութիւններէն ստացած արդիւնքներին համեմատ բարւոքելու դպրոցների ուսումնական մասը։ Կարգադրուեցաւ. ծիսական դպրոցները բաժանել ստորին և բարձր բաժինների, երեք տարուայ դասընթացքով և անցնել առարկաները ուսուցչական ընդհանուր ժողովէն ծիսական ուսումնարանների համար կազմուած ծրագրով։ Այս պէս զի ծիսական դպրոցների ուսուցիչները միջոց ունենան օրինակելի և փորձնական դասեր ևելու, կարգադրեցինք, որ դպրանոցի ուսուցիչները դասեր տան ամեն կիրակի, որ և կիրագործուի։ Այս բոլորը այսպէս կարգադրելով, դարձեալ պէտք է խոստովանիմ, որ ապահով չեմ գործի աջողութեան մասին, քանի որ ուսումնական մասը կախումն ունի անտեսական բարեյաջող հանգամանքէն, իսկ անտեսական մասն յայտնի է, թէ ինչ անանախանձելի դրութեան մէջ է։ Դպրոցների շէնքը փոքր և բոլորովին անյարմար է ուսումնարանի համար, նա մանաւանդ Ս. Հոմբարձման դպրոցը, որ ընդամենը բաղկացած է մի սենեակէ. այն ձեռնարկները և ուսումնական պիտոյքները, որոնք, համեմատ նոր ծրագրին, անհրաժեշտ է, որ ունենան աշակերտները, անհնարին է մեզ ձեռք բերել միջոցների սղութեան պատճառով։ Եւ եթէ այս բոլորի վերայ աւելացնենք աշակերտների մշտական բացակայութիւնը դպրոցներէն, քանի որ ոչ կօշիկ և ոչ հանդերձեղէն ունին նոքա, նա մանաւանդ ձմեռուայ համար. ակներև կլինի, թէ ինչու աջող արդիւնքի հասնելու ապահով չենք։ Արկածեմ որ միակ միջոց կայ այդ դպրոցները բարւոքելու և իւրեանց արժանաւոր տեղը տալու նոցա. — այդ երկու ծիսական դպրոցները միացնել, վարձել մի որ և է յար-

մարաւոր շէնք, և այդպիսով ունենալ մի բարեկարգ ծիսական ուսումնարան, քան երկու անբարեկարգ։

Այս 1883—84 ուսումնարանական տարուայ ընթացքի մէջ Ս. Հռիփսիմեան եկեղեցւոյ ծիսական դպրոցը ունեցել է 47 աշակերտ, որոնցմէն ստորին բաժնի մէջ 18, միջին բաժնի մէջ — 21 և բարձրի մէջ — 9։ Ստորին բաժնի 18 աշակերտներէն փոխադրուել են միջին բաժին միայն 3 աշակերտ, միջին բաժնի 21 աշակերտներէն փոխադրուել են բարձր բաժին — 8, իսկ բարձր բաժնի աշակերտներին վճռած է մի տարի ևս թողնել նոյն բաժնի մէջ։

Ս. Թորոս եկեղեցւոյ ծիսական դպրոցի մէջ այս 1883 — 84 ուսումնարանական տարուայ ընթացքին եղել են 30 աշակերտ, որոնցմէն ստորին բաժնի մէջ եղել են 15, բարձր բաժնի մէջ նոյնպէս 15։ Ստորին բաժնէն փոխադրուած են բարձր — 8, իսկ բարձր բաժնի աշակերտներուն վճռած է. թողնել նոյն բաժնի մէջ այլ ևս մի տարի։

ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

Խորհրդարանի Հոգաբարձուայ։

Հոգաբարձուայ Խորհրդարանը 1883 1884 ուսումն. տարուայն մէջ, բացի իւր սովորական ամսական նիստերէն՝ ամսոյ դրամական հաշիւները քննելու և ստուգելու համար, ունեցաւ նաև 17 ժողով Հոգաբարձուայ և 40 կարգաւորութիւնք՝ Դպրանոցի և իւր հոգացողութեան յանձնուած Սուրբ Հռիփսիմեան Օրիորդաց և երկու Ծովական աղայոց դպրոցաց ամենատեսակ պիտոյքները և խնդիրները անօրինելու համար։

Այդ ժողովներում Հոգաբարձուայ Խորհրդարանը քննեց հսկողութեան ներքոյ գտնուած դպրոցաց 1882—1883 ուսումն. ամի տարեկան դրամական հաշիւները. վերահաստատեցին դրծեց նոյն ամի քննական ցուցակաց ու աշակերտաց և աշակերտուհեաց ուսմանցը մէջ ցուցած յա-

ուսուցիչներ ու վարուց. քննեց և հաստատեց նորընտիր Տեսչի՝ Դպրանոցի բարեկարգութեան համար ամենակարևոր համարած՝ առաջարկութիւնները. հաստատեց Դպրանոցի և ծիսական դպրոցաց նոր Տեսչին առաջարկած ուսուցիչները. քննեց և հաստատեց Դպրանոցի և Ծիսական դպրոցաց 1883—84 1884 և 85 շրջանից մինչև ունենալիք ծախուց կանխահաշիւներն և ուսման ծրագրերը. կարգադրից պէս-պէս վերանորոգութիւններ կատարել դպրանոցական տան մէջ, և տարբոյն վերջը վերահաստատեցաւ Դպրանոցի և Ծիսական դպրոցաց քննական ցուցակացն ու երևցած յառաջադիմութեանցը:

Բաց ի վերագրելոց Հոգաբարձուց խորհրդարանը տարբոյն ընթացքին մէջ իւր առանձին ուշադրութիւնը դարձոյց հետևեալ խնդիրներու վերայ.

Ա. 1882—83 ուսումն. շրջանի վերջը Դպրանոցի տեսչական պաշտօնը՝ նախկին Տեսչի Առաքել Բահաթրեանի մահուան պատճառաւ, թափուր մնացած էր:

Թէպէտ ստացուած էին Հոգաբարձուց խորհրդարանի մէջ քանի մի առաջարկութիւններ զանազան տեղերէ և յայտնուել էին նոյն պաշտօնը ընդունելու ցանկացողներ, բայց Դպրանոցի Հոգաբարձութիւնը, չվստահանալով իւր դպրոցաց ուսումնական մասի կառավարութեան ղեկը յանձնել անծանօթ և անփորձ մարդոյ ձեռք, այլ և խորհուրդ ունենալով, թէ նոյն պաշտօնը ամենայն բաւականութեամբ կարող է վարել իւրեան ծանօթ պ. Գաղուստ Կարապետեան Զարիֆեանց, որ ուսումն աւարտած լինելով Մոսկուայի Կայսերական Համալսարանի լեզուագիտական բաժնի մէջ, երկու տարի արդէն վարած էր Լազարեան Հեմարանի բարձր դասարանաց վարժապետութեան պաշտօնը ամենայն գովասանաց արժանի հանդիսանալով, — պարտ և պատշաճ՝ վարկաւ նորան առաջարկել, որ ընդունէ վիճակիս Թեմական Դպրանոցի տեսչութեան պաշտօնը յիւր վերայ:

Այս, Հոգաբարձութիւնը սահմանելով պ. Զարիֆեանի յօժարութիւնը տեսչու-

թեան պաշտօնն ընդունելու, վիճակիս Սրբազան Առաջնորդի թոյլտուութեամբը յանձնեց նորան 1883—84 ամի սկզբէն վարել Դպրանոցի և քաղաքիս միւս ազգային վարժարանաց ուսումնական վարչութեան գործերը, ակն ունելով միանգամայն, որ պ. Զարիխեանը, ինքը բարեկարգ ուսումնարանաց մէջ դասախօսելով, կրթութիւնն սատնելով ու ծառայելով, ուսոմ և ամենայն ուսումնարանական կարգաց մանրամասն տեղեկութիւն ձեռք բերելով, կարող կըլլինի անշուշտ ապժանաւոր տեսուչ լինել և մեր ազգային վարժարանաց։

Ռ. թեմական Դպրանոցը, բացման սկիզբը, զետեղուած էր իւր սեփական տան մէջ, բայց նորա սկզբնաւորութեան օրէն, օրէ օր, աշակերտաց թիւը յաւելնալով, ուստի և իւր սեփական շինուածքը նեղ գալով նորա պէտքերուն, հարկ եղաւ տեղափոխել դպրանոցը ուրիշ աւելի յարմարաւոր և արձակ տուն։

Քաղաքիս հայ ժողովուրդը, որ երբէք զանց արած չէ՝ իւր զաւակաց դաստիա-

կութեան և լուսաւորութեան համար պէտք եղած ճեռնտուութիւնը հասցնել, չմնայեց նաև այս դէպքում լցուցանել նոցա կարիքը ու յատկացոյց դպրանոցին քաղաքիս հայ ժողովրդոց պատկանած երկյարկանի դպրոցական տունը. վասն որոյ դպրանոցը, 1882—83 տարուոյն սկիզբը, տեղաւորեցաւ հասարակական տան մէջ՝ իւր սեփական շինուածքը տալով Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ Արուեստական դպրոցին։

Տարւոյս ընթացքում խնդիր ծագեցաւ Հոգաբարձութեան մէջ, թէ՝ թէպէտ և դպրանոցը կրտիրապետէ յիշուած հասարակական տանը, բայց այդ տունը ներկայումս մեծածախ նորոգութեանց և փոփոխութեանց կարոտելով, Հոգաբարձութիւնը պիտի չկարողանայ մէջի փոփոխութիւնները կատարել՝ մինչև չունենայ ի ձեռին նոյն տան կալուածագիրը։ Այս պատճառաւ ստիպուեցաւ Հոգաբարձուայ խորհրդարանը Յունիս ամսոյ մէջ դիմել քաղաքական վարչութեան Դումայի, որ բարեհաճի շնորհել դպրանոցին տուած տան կալուածագիրը։

Այս մասին ըստ առաջարկութեան մեծապատիւ Բաղաքապետին սր. Սպիթիքեանի, թէպէտ խոհրդածութիւն եղած է Դումայի մէջ, բայց անպատճառ թոյլ պահպանութեան պատճառաւ՝ խնդիրը տակաւին անորոշ մնացած է, թողնելով ուրիշ բարեպատեհ միջոցի այդ խնդրոյն վերայ միւսանգամ խորհրդածելն ու արժանաւոր վճիռ տալը:

Դ. Վլադիմիրս Մեծապատիւ Սրբազան Առաջնորդը նկատելով, թէ քաղաքիս սուրբ ամբարձման և սուրբ Թէոդորոսի եկեղեցեաց, որպէս և շրջակայ հինգ գիւղօրէից, ծիսական դպրոցները, անկախ լինելով Թիֆլիսեան Դպրանոցի տեսչութենէն, չեն կարողանար իւրեանց աշակերտները պատրաստել դպրանոցի ուսմանց և կանոնաց նախագծին համեմատ, և հասնել իւրեանց նպատակին, — պարտ և պատշաճ համարել էր նոյն դպրոցաց կառավարութիւնը, թէ ըստ տնտեսական մասին և թէ ըստ ուսումնականին՝ կենդրոնացուցանել Թիֆլիսեան Դպրանոցի ՀՈ-

գաբարձութեան մէջ. վասն որոյ և առաջարկած էր ՀՈգաբարձութեան առնուլ նոյն դպրոցներն ևս իւր հոգատարութեան և տեսչութեան ներքոյ: Յառաջ քան զայն Նորին Սրբազնութիւնը յանձնել էր Խորհրդարանի ՀՈգաբարձուց նաև բանալ քաղաքիս սուրբ ՀՈհիսիհան Օրիորդաց դպրոցը և կառավարել դպրանոցի կանոնագրութեան համաձայն:

Դպրանոցի ՀՈգաբարձութիւնը, խնայողութիւն լինելով Սրբազան Առաջնորդի բարենպատակ ցանկութեանն ու առաջարկութեանը, բայց և անկարելի համարելով իւր համար հինգ գիւղօրէից դպրոցաց վերայ հսկելը ձեռնհաս լինել, միւս կողմանէ նոյն դպրոցաց կառավարութիւնը գիւղական հասարակութեանց և ՀՈգաբարձութեանց ձեռքերէն հանելն ու դպրանոցի վարչութեան մէջ ամփոփելը, ըստ մասին, ֆեսսակար ևս դատելով, ըստ այլ և այլ ենթադրութեանց, — խնդրեց Սրբազան ՀՈր, որ բարեհաճի գիւղական դպրոցաց կառավարութենէն զինքը ազատ հանել,

թողով իւր հսկողութեան ներքոյ ունենալ միայն քաղաքիս երկու ծխական դպրոցները սուրբ Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցի հետ ի միասին։

Այդ դպրոցաց գործերէն յայտնի է։ դալ, որ սուրբ Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցը պէտք է պահպանուի սուրբ Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյ տուած տարեկան 500 ռուբ. նպաստիւ, աշակերտուհեաց չափաւոր թոշակովն ու բարերար անձանց նուէրներովը։ Իսկ սուրբ Հարմարձման և սուրբ Թէոդորոսի եկեղեցեաց ծխական դպրոցները կըկառավարուին իւրեանց եկեղեցեաց տուած տարեկան երեք երեք հարիւր ռուբ. տուրքերովը։

Դպրանոցի Հոգաբարձութիւնը, անկարելի համարելով դպրոց մի առանց հաստատուն եկամուտի կառավարել և պահպանելը, զիտեց քաղաքական վարչութեան և տեղւոյս Բարեգործական և Մարդասիրական Ընկերութեանցը և խնդրեց, որ նպաստամատոյց լինեն մեր ծխական դպրոցաց, հաստատուն թոշակ կապելով նոցա տարեկան, որովհետև յայտնի է, որ նոյն դպրոցաց մէջ կուսանին մեր քաղաքացեաց ամենաչքաւոր դասի զաւակները և նոցա օժանդակ լինելը պարտք է հասարակութեան և Բարեգործական Ընկերութեանց։

Քաղաքական վարչութիւնը, ըստ իւրում գովանի յատկութեան, երբէք չմնայել ձեռնտուութիւն իւր հասարակի զաւակաց մտաւոր զարգացման համար, իսկոյն և եթ որոշեց տալ սուրբ Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցի ընդ միշտ տարեկան 600 ռուբ. և նոյնչափ երկու ծխական դպրոցացը։ Այս գումարը կըստացուի շարունակաբար և կանոնաւոր յամսոյ ամիս և գործ կըդրուի յիշեալ դպրոցաց կառավարութեանը։

Այլ ևս Հոգաբարձութիւնը տեսնելով, թէ սուրբ Հռիփսիմեան դպրոցը չունի իւր սեփական տուն և իւր հաստատուն եկամտից կրրոդ մասը վարձ կըտայ տան համար. միւս կողմանէ օրէ օր ընդլայնելով իւր յառաջադիմութիւնը հար-

կաւոր կրլենի բանալ աւելի դասարաններ և թէ ուսման տարեկիզբը ունելով 120 և աւելի աշակերտուհի 3 դասարանաց մէջ տարեկան արդիւնքը պիտի չքաւէ ծախքերը ծածկելու չնայելով եղած օժանդակութեանցը, — դիմեց խնդրանօք Սրբազան Առաջնորդին և ազերսեց, որ Նորին Սրբազնութիւնն սուրբ Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցի վիճակը ընդ միշտ ապահովելու համար, բարեհաճի շնորհել նոյն դպրոցին տեղւոյս եկեղեցական մեմուվաճառութեան աւագ պահարանի արդիւնքը և մի մասն հանգստարանի եկեղեցւոյ արդիւնքէն։

Հոգաբարձութիւնը չի կրնար այս տեղ լռելեայն անցնել և չի յայտնել հրապարակաւ իւր երախտագիտական զգացմունքն ու ջերմագոյն շնորհակալութիւնը տեղւոյս դրամատան ֆոխաբաշի վարչի ընկերութեան Մեծապատիւ Անդամոց, Հայուհեաց խնամատար ընկերութեան վարչութեան պատուական տիկնանց և թատերասիրաց խումբի պատուական ընկերաց, որոնք ցան-

կալով օժանդակ հանդիսանալ մեր քաղաքի ազգային դպրոցաց, ինքնայօժար կամօք, նպաստամատոյց եղան տարւոյն ընթացքում իւրեանց նուէրներովը։

Անդամք փոխադարձ վարկի ընկերութեան այս տարի ևս անցեալ տարւոյ նման ընծայեցին օրիորդաց դպրոցին 300 ռուբ., իսկ ծիսական դպրոցացը 100-ական ռուբ։ Բայց դժբաղդաբար վերջին 200 ռուբլին սխալմամբ սուրբ Համբարձման և սուրբ Թէոդորոսի եկեղեցեաց երեսփոխանացը ձեռքն անցնելով և նոյն եկեղեցեաց մատեանը մուտք դրուելով, անկարելի եղաւ գործ դնել դպրոցաց վերայ ի ձեռն Հոգաբարձութեան։

Հայուհեաց խնամատար ընկերութեան վարչութիւնը երեկոյ և պարահանդէս տարբեր դպրանոցի դահլիճին մէջ և գոյացուցած 290 ռուբ. արդիւնքը նուիրեց օրիորդաց դպրոցին։ Նոյն ընկերութիւնը այլ ևս որոշած է օրիորդաց դպրոցին մէջ մի առանձին ձեռարուեստից դասարան պահել

իւր հաշուովը առաջիկայ ուսումն. տարուայ սկզբէն։

Այսպէս և թատերասիրաց խումբը առանձին ներկայացումն տուաւ յօգուտ օրիորդաց դպրոցի, յորմէ գոյացաւ արդիւնք 100 ռուբլի։

Ահա այս նպատակներն էին, որ օգնեցին Հոգաբարձութեան կառավարել օրիորդաց դպրոցը տարուայ ընթացքում, ծածկելով նոյն դպրոցի առօրեայ ծախքերը։ Այսուսայ Հոգաբարձութիւնս և անկիմիտ է, որ նոյն հաստատութիւնք և ուրիշներ չեն պանար նաև առաջիկայ տարուայ մէջ օգնութեան հասնել մեր ծխական դպրոցաց իւրեանց կարեկցութեամբն ու նուէրներով, որպէս զի կարողանան այն դպրոցները անապահով կառավարել, ուսումն և դաստիարակութիւն տալ իրենց մէջ գտնուած ազգի աղքատ զաւակացը և այդ նպատակին ծառայելով, պտղաբեր լինել ազգիս յառաջադիմութեան համար։

Դ. Համաքաղաքացիք ոմանք, կամենալով արտայայտել իւրեանց յարգանքը, որ

ունին առ մեծապոյ անդամ Հոգաբարձութեան պ. Մինաս Եղիայեան Պալասանեանցը, նորա հասարակական գործունէութեան մէջ ցուցած արդիւնաւոր աշխատանաց համար, ուստի և յաւերժացուցանել նորա յիշատակը,—մատուցին դպրանոցի Հոգաբարձութեանը՝ իւրեանց մէջ ժողոված 535 ռուբ. դրամը և խնդրեցին, որ այդ դրամարի տոկոսաւոր մի չքաւոր պատանի ուսանի դպրանոցի մէջ՝ իբրև սան Պալասանեան Մինասայ։ Իսկ ինքն պ. Պալասանեան յայտնեց Հոգաբարձութեան իւր յօժարութիւնը, որ իւր կենդանութեանը ինքն կը հոգայ իւր սանի ամենայն թէ հանդերձից և թէ դասական պիտոյքները։

Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և սահմանեց մշտնջենաւոր մի սան ունենալ դրպրանոցի մէջ յանուն Պալասանեան Մինասայ, ուստի և մատուցուած դրամարին գնեց վեց հարիւրական ռուբլիանոց արքունի գրամատոմներ արևելեան փոխառութեան, որոշելով այդ դրամարի տոկոսիքը գործա-

ծել ի թոշակ ուսման Պալապանեան սանի։

Գ. Ի վերջ ուսումնապանական տարուոյն, Հոգաբարձուաց ժողովը վերահաստատելով Հոգաբարձութեան տարեկան մուտից և ելից գումարացը և տեսնելով, թէ իւր գանձարանի մէջ յաւելեալ գումար կայ 15,608 ռուբ. 45 կոպ., որոշեց գնել այլ ևս ոսկեմնի տոկոսաբեր պրամատոմներ հինգ հազար ռուբ. արժէից, որով դպրանոցի ունեցած տոկոսաբեր թղթոց գումարը ի վերջ տարուոյն կըհասանի 15,600 ռուբլեաց, որոց ի գին տրուած է 14,477 ռուբ։ Այս պրամատոմները մնացորդ 131 ռուբ. 45 կոպ. գումարի հետ կըպահուին տեղւոյս դրամանոցի մէջ։

Դրամական հաշիւ— Խորհրդարանին։

Ինչպէս կըտեսնուի Հոգաբարձուաց Խորհրդարանի հաշուեմատեաններէն եւ առաջարկուած հաշուէցուցակէն, Հոգաբարձութիւնը 1883—84 ուսումն. տարուոյն մէջ ունեցել է.

	ՄՈՒՏՔ.	ԵԼՔ.	ՑԱՒԵԼԵԱԼ.
Դպրանոցի . . .	32,328 57	18,051 62	14 276 95
Օր. դպրոցի. . .	2,729 90	1,710 48	1,019 42
Ծխական դպրոցաց.	1,498 08	1,186 06	312 08
Ընդ ամենայն .	36,556 55	20,948 10	15,608 45

ՊԱՏԿԵՐ

մտից և ելից գումարաց Թեմական Դպրանոցի վիճակիս վան 1883—1884 ուսումն. ամին:

№	ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.	Բուբ.	Կ.
1	Գումար, յաւելեալ ի նախընթաց ամաց	—	—	8616	03
2	Վարձ շինուածոյ խալիպեան ուսումնարան. Թէոդոսիոյ.	—	—	3000	—
3	Տոկոսիք արքունի դրամատունաց	500	—	—	—
	,, ,, առձեռն պատրաստի դրամոց. . .	62	52	562	52
4	Գումար աւանդեալ ի Հանդուց. Պետրոս Քացախեանի.	—	—	200	—
5	Թուղակք աշակերտաց դպրանոցական դասարանաց . .	2076	—	—	—
	,, ,, Նախակրթարանաց.	2454	—	—	—
	Գումար, ընկալեալ վան մանր ծախուց աշակերտաց եւ վան դասուց մարմնամարզութեան. . .	489	65	5019	65
6	Գումար, ընկալեալ ի Սրբազան Ռաֆֆնորդէ ի հաշիւ 6,160 բուբ. մնացելոց ի դրամոց խալիպ. ուսումն.	—	—	4080	—
7	Նուէր առ կազմել զթուղակ սանու. միոյ յանուն պ. Պալապանեանի.	—	—	535	—
8	Նպաստ քաղաքական վարչութեան Նոր Նախիջեւանի.	—	—	6875	37
9	Նպաստք եկեղեցեաց վիճակի ապաստիկք վան Նախընթաց 1882—83 ամի Օտեսայ քաղաքի . . .	50	—		
	,, ,, ,, Ներչ քաղաքի. . . .	10	—		
	,, վան 1883—84 տարւոյ վանուց սուրբ Խաչի, չորից եկեղեցեաց Նախիջեւան քաղաքի եւ հինգ եկեղեցեաց գիւղօրէից.	2175	—		
	Մոսկվա եւ Պետերբուրգ քաղաքաց	1000	—		
	Ս. Խաչ վանաց եւ սուրբ Ստեփանոսաց եկեղեցւոյ հնոյն խրիմու.	135	—		
	Հնչեակ քաղաքի	50	—		
	Նոզայսք քաղաքի.	10	—		
	Նպաստ վան 1884—85 ամի Մելիտոպոլ քաղաքի յառաջոյ ընկալեալ.	10	—	3440	—
	Գումար .	—	—	32,328	57

№	ԵԼՔ.	Ր.	Կ.	Բուբ.	Կ.
1	Ա. Ի կառավարութիւն դպրանոցի, այն է՝ ռոճիկք.				
	Պ. Զարխեանի վան պաշտամանն տեսչութեան. 1800 ր				
	Նմա եւս վան դասատուութ. լատին լեզ. 19 դ. 1320 ,,				
	Զարիֆեան Խ. ա. քահ. վան կրօնի. 12 ,, 900 ,,				
	Խաչատրեանի՝ Հայոց լեզուի . . . 16 ,, 1140 ,,				
	Բաթիւքի՝ Ռուս լեզուի եւ ընդ. պատմ. 10 ,, 850 ,,				
	Ձերեակեվի՝ Ռուս լեզու . . . . 8 ,, 700 ,,				
	Միքլաշեվիչի՝ գաղղիացւոց լեզուի . . 6 ,, 550 ,,				
	Պրասոլովի՝ թուաբանութեան . . . 16 ,, 1140 ,,				
	Շահագիզեանի՝ Աշխարհ. պատմ. . . 9 ,, 675 ,,				
	Կիրլիեանի՝ լատինաց լեզուի . . . 7 ,, 525 ,,				
	Բախմուտաքի՝ գծագրութեան . . . 6 ,, 240 ,,				
	Գանձապետեանց Մարտ. քահ. գեղագր. 4 ,, 160 ,,				
	Տէր-Սարգսեան Մարգ. դպրի՝ երգեցող. 7 ,, 280 ,,	10280	—		
	Բ. Ռոճիկք երկուց դասատարակաց (տուտոր) եւ վերակացուի, այն է Պրասոլովի . . 400 ,,				
	Կիրլիեանի . . 400 ,,				
	Տեօլվէթեանի . 400 ,,	1200	—		
	Գ. Ռոճիկ Մատենադարանապետ Ռոմանոսեանի. . .	150	—		
	Դ. Վարձ երից ծառայից եւ պահապանի	444	50		
	Ե. Ծախք անտեսական	825	68		
	Զ. Ծախք վան դասական պիտոյից	366	90		
	Է. Մանր ծախք աշակերտաց եւ ռոճիկ ուսուցչի մարմնամարզութեան	345	57		
	Ը. Գումար տուեալ ի գին 400 օր. այրբենարանաց պ Պատկանեանի.	100	—		
	Թ. Ի ռոճիկ ուսուցչաց Նախակրթական դասարանաց. Գանձապետեանց Մարտ. քահ. վան կրօնի 9 դ. 330 ր.				
	Տեօրվէթեանի Ռուսաց լեզուի. . . 16 ,, 640 ,,				
	Շահագիզեանի Հայոց լեզուի. . . . 8 ,, 320 ,,				
	Կիրլիեանի Հայոց լեզուի եւ թուաբան. 16 ,, 640 ,,				
	Տէր-Սարգսեան Մարգ. դպրի երգեցող. 4 ,, 120 ,,				
	Ռոմանոսեանի վան տորին նախակրթ. 21 ,, 630 ,,	2680	—	16,392	65
2	Վարձ շինութեան 25 նոր դրասեղանաց աշակերտաց եւ միոյ մեծ գրադարանի վան մատենադ. դպ.	—	—	595	50
3	Ծախք նորոգութեան ի մէջ տան դպրանոցի . . .	—	—	519	05
4	Վարձ գործավարի Հոգաբարձութեան եւ ծախք խորդարանի նորին.	—	—	544	42
	Պատրաստի գումար յաւելեալ, որ գտանի ի դրամանոցի քաղաքիս ընդ արքունի դրամատունաց. . .	—	—	14,276	95
	Գումար .	—	—	32,328	57

ՊԱՏԿԵՐ

մասից և հլից դումարաց Ս. Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցի և Ծխական դպրոցացն եկեղեցեաց Ս. Համբարձման և Ս. Թէոդորոսի վան 1883—1884 ամի։

№	ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.	Ռուբ.	Կ.
	Օրիորդաց դպրոցի.				
1	Յաւելեալ ի նախընթաց ամաց	663	90		
2	Նպաստ քաղաքական վարչութեան Նախիջևանի . .	600	—		
3	Դումար ընկալեալ յարդեանց սուրբ Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյ	500	—		
4	Թոշակք աշակերտուհեաց	276	—		
5	Նպաստ տուեալ յանդամաց դրամատան քաղաքիս . .	300	—		
6	Դումար զոյացեալ ի պարահանդիսէ՝ տուեալ յանդամաց վարչութեան Հայուհեաց Խնամատար Ընկերութեան.	290	—		
7	Դումար զոյացեալ ի ներկայացմանէ թատրոնի ի ձեռն անդամաց թատրոնական ընկերութեան. . . .	100	—	2729	90
	Ծխական դպրոցաց.				
1	Յաւելեալ ի նախընթաց ամաց	298	08		
2	Նպաստ քաղաքան վարչութեան	600	—		
3	Դումար ընկալեալ յարդեանց եկեղեցեաց	600	—	1498	08
	Դումար. , .	—	—	4227	98

№	ԵԼՔ.	Ր.	Կ.	Ռուբ.	Կ.
	Օրիորդաց դպրոցի.				
1	Տարեկան ռոճիկ գործավարի վարչութեան, ուսուցչաց եւ ուսուցչուհեաց	1064	92		
2	Վարձ տան	325	—		
3	Վարձ աղախնոյ.	132	—		
4	Ծախք տնտեսական	158	88		
5	Ծախք վան դասական պիտոյից	29	68	1710	48
	Ծխական դպրոցաց.				
1	Ռոճիկ ուսուցչաց դպրոցին Ս. Համբարձման եկեղեցւոյ.	550	—		
2	Ռոճիկ ուսուցչաց դպրոցին Ս. Թէոդորոս եկեղեցւոյ .	550	—		
3	Նպաստ տուեալ ուսուցչաց Մաքսմաճեան քահանայի եւ Պարդոի Եսիբիսեանց (*)	86	—	1186	—
	Պատրաստի դումար յաւելեալ	—	—	1331	50
	Դումար . .	—	—	4227	98

(*) Ծանոթութիւն. Տնտեսական ծախք, վառելիք եւ վարձ ծառայից ծխական դպրոցացն կըհոգացուին յարդեանց եկեղեցեաց։

Ի վերջ ամենայնի ոչ առելոյդ կը համարի Հոգաբարձութիւնս յիշել այս տեղ, թէ ինչպէս կրաեանուի վիճակիս թուականն Դպրանոցի Պայսերահաստատ կանոնագրութենէն, Խաչդրագոյն հաճութեամբ թագաւոր Պայսէր և անօրէնութեամբ Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան՝ դպրանոցի կառավարութեան համար՝ զբաղ խաւոր արդիւնք յաստացուցած են վիճակի եկեղեցեաց տուրքերը, որոց գումարը պէտք է լինի ի տարին 4100 ռուբ.։ Իւրաքանչիւր եկեղեցւոյ երէցփոխանի վերայ պարտականութիւն դրուած է իւրեան տուրքը, ամբաստանել, հաստատել դպրանոցի Հոգաբարձութեան իւրաքանչիւր տարւոյ Սեպտեմբեր ամսեան սկիզբը։ Սակայն, ճանաչելով այս կարգադրութեանը, ճանաչելով, վիճակային հոգևոր իշխանութեան հրամանագրութեանցը, ճանաչելով որ իւրաքանչիւր եկեղեցւոյ համար շատ ընչին տուրք որոշուած է տալ ի նպաստ վիճակային դպրանոցի, երէցփոխաններէն ոմանք զանց կառնեն իւրեանց նպաստները հաստատ-

նել դպրանոցի Հոգաբարձութեան, որոյ պատճառաւ և կրաժուարացուի հաշուոյ ճշդութիւնը պահպանել ըստ կարգի։

Այսպէս յօրէ բացման դպրանոցի, յընթացս 1881–82, 1882–83 և 1883–84 մաց, ամենեին չեն մատուցած իւրեանց տուրքերը երեսփոխանք եկեղեցեաց հետեւեալ քաղաքաց. Խմայիլու, Գրիգորիապոլու, Պախչիսարայի և Թէոդոսիոյ, ընդամենայ 390 ռուբ։ Յընթացս 1882—83 և 1883 — 1884 ամաց՝ նպաստներ չեն մատուցած երէցփոխանք քաղաքաց. Տրիշնեի, Աղդերմանի, Հոմիենու, Օլպազարի, Եւպատորիոյ և Եյսկի—360 ռուբ։ Յընթացս 1883—84 տարւոյ՝ երէցփոխանք. Օրհեի, Ղարասու բազարի սուրբ Գրիգոր վանաց և Աստուածածնայ եկեղեցւոյ, Սիմֆերոպոլի, Դսախիջևանի սուրբ Թէոդորոս եկեղեցւոյն և Ակրչի աղօթատան 320 ռուբ։ Բոլոր ապառիկ մնացած նպաստից գումարն է 1070 ռուբ։ Ուստի հարկ կը համարի Հոգաբարձութիւնս խնդրել վերանուանեալ արդոյ երէցփոխանացը որ

փութան իւրեանց վրայ մնացած ապառիկները հասցնել դպրանոցի Հոգաբարձուց Խորհրդարանին։

Նախագահ Խորհրդոյ Հոգաբարձուց

ԳՐԻԳՈՐ ՍԱԼԹԻԲԵԱՆՑ։

Գործավար Խաչատուր ա. քահ. ՁԱՐԻՖԵԱՆՑ։

ՅՈՒՅՑԱԿ

տրոց եկեղեցեաց վիճակի ի կառավարութիւն դպրանոցի.

1	Ս.-Պետերբուրգի սուրբ Եկատերինեայ . . .	750
2	Մոսկվայի սուրբ Խաչի	250
3	Նոր Նախիջեւանի սուրբ Լուսաւորչի . . .	600
4	,, ,, Աստուածածնայ . .	400
5	,, ,, Գէորգայ	500
6	,, ,, Նիկողայոսի . . .	300
7	,, ,, Համբարձման . . .	50
8	,, ,, Թէոդորոսի. . . .	50
9	,, ,, Սուրբ Խաչ վանուց.	100
10	,, Զալթիր գեղջ սուրբ Համբարձման .	75
11	,, Թոփտի ,, ,, Սարգսի. . .	75
12	,, Մեծ Սալա ,,, Աստուածածնայ	75
13	,, Փոքր ,, ,, Գէորգայ . .	25
14	,, Նիավիթա ,, Ց.-Կարապետի .	25
15	Ղարասու-բազարի սուրբ Փրկիչ վանուց. . .	100
16	,, ,, Աստուածածնայ.	50
17	Հին Խրիմու սուրբ Խաչ վանաց.	100
18	,, ,, Աստուածածնայ . . .	35
19	Ագդիրմանի սուրբ Աստուածածնայ.	100
20	Սիմֆերոպոլի ,, ,, ...	100
21	Օտեսայի սուրբ Լուսաւորիչ	50
22	Հնչեչաի սուրբ Աստուածածնայ	50

23	Գրիգորիապոլու սուրբ Պետրոս եւ Պօղոսի. .	40
24	,, ,, Աստուածածնայ . . .	35
25	Օր բազարի սուրբ Աստուածածնայ	25
26	Քիշնեւի ,, ,, ...	25
27	Թէոդոսիոյ ,, Հրեշտակապետաց	15
28	,, ,, Գէորգայ	10
29	,, ,, Յովակիմայ եւ Աննայի . .	10
30	Բաղչիսարայի սուրբ Աստուածածնայ . . .	10
31	Նողայաքու ,, ,, . . .	10
32	Օրհէյի ,, ,, . . .	10
33	Իսմայիլու ,, ,, . . .	10
34	Մելիտոպոլի ,, ,, . . .	10
35	Եյսքի ,, ,, . . .	10
36	Հոթինու սուրբ Յովհաննու	10
37	Եւպատորիոյ սուրբ Նիկողայոսի	10
38	Կերչի սուրբ Հրեշտակապետաց.	10
	Ընդ ամենայն .	4110

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUR-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

20087
2013

Jma
104.
C 9pm 595